ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ԲՈՂՈՔԻ ՆԵՐԿԱՅԱՑՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Բողոքի ծածկագիրը և ամսաթիվը՝ ԳԲՔԱ-ԼՕ-2020/74, 16.06.2020թ.

Բողոք բերող անձ՝ «Տեխնիկական անվտանգության ազգային կենտրոն» ՊՈԱԿ

Պատվիրատու՝ ՀՀ պաշտպանության նախարարություն

Գնման ընթացակարգի ծածկագիրը՝ «ՀՀ ՊՆ-ԳՀԾՁԲ-20-10/17» գնանշման հարցում

Գնման առարկան՝ փորձաքննության ծառայությունների (ՊՆ զորամասերի արտադրական վտանգավոր օբյեկտների փորձաքննություն, պատասխանատու անձանց ուսուցում և որակավորում) ձեռքբերում

Բողոքի պահանջը՝ Չեղյալ հայտարարել ՀՀ պաշտպանության նախարարության կողմից հայտարարված «ՀՀ ՊՆ-ԳՀԾՁԲ-20-10/17» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգը, իսկ նոր ընթացակարգի անցկացումը իրականացնել վերոնշյալ փոփոխությունների իրականացմամբ:

ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ՝ Լ. ՕՀԱՆՅԱՆ

ՔԱՐՏՈՒՂԱՐ՝ Ռ. ՄԿՐՏՉՅԱՆ

Նիստերին կարելի է առցանց հետևել https://www.e-gov.am/gnumner/ **հղումով**.

Տեղեկացնում ենք, որ «Գնումների մասին» ՀՀ օրենքի՝

- 50-րդ հոդվածի 10-րդ մասի համաձայն՝ յուրաքանչյուր անձ, որի շահերը խախտվել են կամ կարող են խախտվել բողոքարկման հիմք ծառայած գործողությունների արդյունքում,

իրավունք ունի մասնակցելու բողոքարկման ընթացակարգին՝ մինչև բողոքի վերաբերյալ որոշում ընդունելու ժամկետը գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ներկայացնելով համանման բողոք: Նույն հոդվածի համաձայն՝ բողոքարկման ընթացակարգին չմասնակցած անձը զրկվում է գնումների հետ կապված բողոքներ քննող անձին համանման բողոք ներկայացնելու իրավունքից,

- 51-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ներկայացված բողոքն ինքնաբերաբար կասեցնում է գնման գործընթացը՝ նույն օրենքի 50-րդ հոդվածի 9-րդ մասով նախատեսված հայտարարությունը հրապարակվելու օրվանից մինչև բողոքարկման վերաբերյալ ընդունված որոշման՝ տեղեկագրում հրապարակման օրը ներառյալ:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՏԱԿԱՐԳ ԻՐԱՎԻՃԱԿՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ <<ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆ>> ՊՈԱԿ

«16» 06 2020 թ. № 1/386.

ՀՀ ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Ղեկավարվելով <<Գնումների մասին>>
ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 2-րդ կետի 2-րդ
ենթակետի պահանջներով

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ ԲՈՂՈՔԻ ՆԵՐԿԱՅԱՑՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

1. Պատվիրատու՝ ՀՀ պաշտպանության նախարարություն:

2. Գնման ընթացակարգի ծածկագիրը և առարկան՝ «ՀՀ ՊՆ-ԳՀԾՁԲ-20-10/17» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի անցկացմամբ փորձաքննության ծառայությունների (ՊՆ զորամասերի արտադրական վտանգավոր օբյեկտների փորձաքննություն,պատասխանատու անձանց ուսուցում և որակավորում) ձեռքբերում:

3. Բողոքի նկարագրությունը՝

«ՀՀ ՊՆ-ԳՀԾՁԲ-20-10/17» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հրավերով սահմանված պայմանագրի նախագծի (հավելված N 6) տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցով պահանջվող ծառայությունները սահմանված են որպես 1(մեկ) չափաբաժին, այն դեպքում, երբ որ դրանք ունեն տարբեր ծածկագրեր, մասնավորապես արտադրական վտանգավոր օբյեկտների փորձաքննության իրականացման ծածկագիրը սահմանված է 50531140, իսկ անվտանգության ոլորտում ուսուցման ծառայությունների ծածկագիրը՝ 80551100, հետևաբար խախտվել է <<Գնումների մասին>> ՀՀ օրենքի 25-րդ հոդվածի 2-րդ

կետի պահանջները, ինչպես նաև տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցով սահմանված ծառայությունների 2-րդ կետով սահմանված <<Օդ, He, O2, CO միջավայրում և բարձր ճնշման՝ 100-400 կգուժ/սմ2 տակ աշխատող գազագլանաանոթների (բալոնների) նորոգման և բարձր ճնշման փականների փոխարինման աշխատանքների իրականացման պահանջը սահմանված չէ տեխնիկական անվտանգության փորձաքննության իրականացման օրենսդրությամբ, հետևաբար վերոնշյալ պահանջով սահմանափակվում է տեխնիկական անվտանգության փորձաքննություն իրականացնող հնարավոր մասնակիցների մասնակցությունը «ՀՀ ՊՆ-ԳՀԾՁԲ-20-10/17» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգին:

4. Բողոքի պահանջը՝

Չեղյալ հայտարարել ՀՀ պաշտպանության նախարարության կողմից ՀՀ ՊՆ-ԳՀԾՁԲ-20-10/17» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգը, իսկ նոր ընթացակարգի անցկացումը իրականացնել վերոնշյալ փոփոխությունների իրականացմամբ:

5. <<Տեխնիկական անվտանգության ազգային կենտրոն>> ՊՈԱԿ-ի բանկային տվյալները՝

Երևանի թիվ 1 ՏԳԲ

ՀՀ 900018003724

ՀՎՀՀ 01556354

Hrmin@mail.ru

Կից ներկայացնում ենք բողոքարկման վճարի կատարման վերաբերյալ վճարման փաստաթղթի սկանավորված տարբերակը և «ՀՀ ՊՆ-ԳՀԾՁԲ-20-10/17» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցը՝ բողոքարկման հասցեի հետ հանդիսացած ընդգծված կետերով:

Առդիր՝ 5 էջ:

Հարգանքով՝

Վ.ԳԵՎՈՐԳՅԱՆ

Կապարող՝ Տնտեսական, տեղեկատվական և մերկածության բաժնի պետի տեղակալ՝ Հ. Մինասյան 1251:

0054, Երևան, Դավիթաշեն 4, Ա. Միկոյան փող. 109/8 Հեռ.՝ (+374 12) 31 79 10